Ես սկսեցի ազատ շունչ քաշել: Ասլանը լաւ դուրս պրծաւ, մտածում էի ես: Այժմ նա դարձաւ դէպի ոստիկանութեան պետը՝ նրա հետաքրքրութիւնը եւս գոհացնելու համար:

— Դուք, պարոն Լաթիֆ-բէկ, լաւ է, որ յիշեցրիք ինձ, որ ես յանձնեմ ձեզ իմ թղթերը, որպէսզի դուք եւս նրանց համեմատ պատրաստէք ձերը: Խնդրեմ, հէնց այժմեանից ընդունեցէք, որովհետեւ ես էգուց այնքան զբաղոած կը լինեմ իմ պատրաստութիւններով, որ գուցէ կը մոռանամ:

— Մեծ ուրախութեամբ, — ասաց ոստիկանութեան պետը:

— Ես հէնց այդ նպատակով էի առել ինձ հետ: Ահա այդ իմ անցագիրն է, իսկ այդ այն բաց հրամանագիրն է, որ Արզրումի նահանգապետը շնորհել էր ինձ: Կարծեմ այդ երկուսը բաւական է:

— Բաւական է, — ասաց փաշան: — Էգուց թէ՛ ձեր թղթերը, եւ թէ՛ մերը կէսօրից մի ժամ առաջ կը յանձնուեն ձեզ:

Քուրդ բէկը սառած մնաց: Առաջնորդին եւս տիրեց ոչ սակաւ ապշութիւն: Բայց իմ զարմացքը աւելի մեծ եղաւ, թէ որտեղի՞ց յայտնուեցան Ասլանի մօտ այդ թղթերը: Նա բոլորովին ուղիղ էր ասում, որ անցել էր իր նկարագրած ճանապարհների գծով. ուղիղ էր եւ այն, որ ամէն տեղ մեծ պատրաստականութիւն էին ցոյց տուել նրան ընդունելու եւ շատ ձիաւորներով ճանապարհ դնելու: Նա ծածկեց միայն Ս. Տիրամօր վանքը գնալը եւ լեռնային ճգնաւորի կերպարանքի մէջ մտնելը: Մինչեւ այս տեղը նրա ասածների բոլորը ուղիղ էին:

Այո, Ասլանը լաւ դուրս պրծաւ: Բայց քուրդ բէկը մնաց դատապարտութեան ներքոյ. պէտք էր մի կերպով արդարացնել նրան: Նա ջալալիների ցեղապետն էր. ջալալիները մօտ ժամանակներում ասպատակութիւններ էին արել. Ասլանը գիտէր այդ. Ասլանը ասաց, թէ ինքը այդ մասին կայայտնէ ուր որ յարկն է, ուրեմն ինչպէ՞ս թողնել այդ բոլորը առանց ուշադրութեան եւ չարդարացնել քրդին:

Երեք հայ երեւելիներից մէկը, Շարման-բէկը, փաստաբանեց.

— Պէտք է ի նկատի ունենալ, պարոն բժշկապետ, որ ջալալիների վերջին անգամի ասպատակութիւնները Տաճկաստանի հայերին չեն վերաբերում, այլ՝ Պարսկաստանի հայերին:

— Այդ ես գիտեմ, — նրա խօսքը կտրեց Ասլանը: — Բայց հայը ամէն տեղ հայ է, թէ՛ Պարսկաստանում լինէր, թէ՛ Տաճկաստանում: Երբ նա կողոպտւում է, աւազակը պէտք է անպատճառ պատժուի: Այստեղ հարցը անկարգութեան մասին է եւ ոչ թէ հպատակութեան կամ ազգութեան: Եթէ կողոպտո-